

-15

1572

Գ. Տ Ա Ր Ի

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

ՀԱՄԱԶԱՅՆ ԵՐԱԳՐԻ ՀՈԳԵԻՈՐ ԻՃԽԱՆՈՒԹԵԱՆ

X տպ.

Կ ա ղ մ ե ց

Ս Ա Հ Ա Կ Ա. Ք Ա Հ. Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն Ց

220

623-ՍԱ

Խ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆՏԱՆՈՒ. ՊՕԼԻՑ. 7

1909



210751
U-15

220 7. SUR 03 AUG 2009
1 623-04

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

ՀԱՄԱՁԱՅՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԳԵԽՈՐ ԻՅԽԱՆՈՒԹԵԱՆ



1004
19769

ՍԱՀԱԿ Ա. ԳԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

Թ Ի Յ Լ Ի Ս
ԷԼԵԲՏՐԱՏԳՐԱՐԱՆ ՕՐ.Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ 7
1909

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն հայոց, Ծայ-
րագոյն Պատրիարքի համազգական Նախամեծար
Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ
Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

× 1. Ա Ն Ա Ռ Ա Կ Ո Ր Դ Ի Ն ×

Մի մարդ ունէր երկու որդի: Մի օր փոքրն
ասաց հօրը. «Հայր, տուր ինձ իմ բաժինը քո
հարստութիւնից»: Հայրը տուաւ որդուն նրա բա-
ժինը: Շատ օր չանցած՝ փոքր որդին գնաց հե-
ռու աշխարհ և այնտեղ իւր ունեցածը փչացրեց՝
անկարգ կեանք վարելով:

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հէնց այն
ժամանակ այն երկրումն էլ սաստիկ սով ընկաւ:
Նա սկսեց մուրացկանութիւն անել, բայց դրա-
նով էլ չկարողացաւ ապրել: Վերջը գնաց այն
երկրի բաղաքացիներին մինի մօտ և ծառայ դար-
ձաւ: Նա էլ ուղարկեց նրան իւր հանդը, որ խո-
զեր արածացնէ: Փոքր որդին շնորհակալ կլինէր,
եթէ խոզերի կերածն էլ գտնէր, բայց այդ էլ
ձեռք չէր ընկնում,

Նա սկսեց երկար մտածել և ինքն իրան ա-
սել. «Քանի ծառաներ իմ հօր տանը հաց են ու-
տում, իսկ ես այնտեղ սոված մեռնում եմ. կը-
դառնամ հօրս մօտ և կասեմ նրան — հայր ես մե-
ղաւոր եմ քո և Աստուծո առաջ. այլևս արժանի
չեմ քեզ որդի կոչուելու. ընդունիր ինձ իբրև
քո ծառաներից մինը»:

Փոքր որդին վերկացաւ և եկաւ հօր մօտ։
Հայրը հեռուից նկատեց նրան. գուլթը շարժուեց-
առաջ վազեց. վզովն ընկաւ և համբուրեց։ Որդին
ասաց. «Ես մեղաւոր եմ քո և Աստուծոյ առաջ.
այլևս արժանի չեմ որդի կոչուելու»։ Մի ու-
րիշ հայր որ լինէր, չէր ընդունի անկարգ որ-
դուն, բայց սա բարի էր, ուստի և ասաց ծա-
ռաներին. «Հանեցէք սրա հին շորերը և նորերը
հագցրէք. մատանին գրէք մատին. ոտներին կօ-
շիկներ հագցրէք. գեր եզը մորթեցէք. ուտենք և
ուրախանանք, որովհետեւ իմ այս որդին մեռած
էր, կենդանացաւ, կորած էր գտնուեցաւ։ Ամեն-
քըն էլ սկսեցին ուրախանալ։

Այդ միջոցին մեծ որդին հանդուժն էր, երբ
տուն դարձաւ՝ երգելու և պարելու ձայներ լսեց.
Ծառաներից մինին կանչեց իւր մօտ և հարցրեց,
թէ այդ ինչ է։ Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ
դարձել է. հայրդ գեր եզը մորթել տուաւ և ա-
հա ամենքն էլ ուրախանում են»։

Սա փոխանակ ուրախանալու՝ նախանձից
բարկացաւ և տուն չմտաւ. բայց հայրը, որ կա-
րող էր հրամայել, դուրս եկաւ և աղաչում էր
նրան ներս գալ։ Մեծ որդին բարկացած պա-
տասխան տուաւ հօրն ու ասաց. «Այս քանի տա-
րի է ծառայում եմ քեզ. քո խօսքից երբէք դուրս
չեմ եկել, բայց ինձ մի ուլ էլ չտուիր, որ ըն-
կերներին հետ ուրախանամ, իսկ այդ որդիդ, որ

քո հարստութիւնը կերաւ, փչացրեց, նրա համար
գեր եզն ես մորթել»։

Հայրն ասաց նրան. «Որդեակ, դու ամեն ժա-
մանակ ինձ մօտ ես, ինչ որ ունիմ, բոլորն էլ
քոնն է. դու պէտք է ուրախանաս, որ քո եղ-
բայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գըտ-
նուեցաւ և աչ թէ տրամես»։

2. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐՍՅՈՒ ԱՌԱԿԸ

Յիսուս այս առակը պատմեց մի օրինականի։

Մի մարդ երուսաղէմից գնում էր Երիքով
քաղաքը։ Ճանապարհին աւազակների ձեռն ըն-
կաւ։ Սրանք կողոպտեցին անծանօթին. վիրաւո-
րեցին. կիսամահ թողին և գնացին։

Պատահամբ մի քահանայ այդ ճանապար-
հովն անցաւ. տեսաւ նրան, բայց թողեց գնաց՝
առանց ուշադրութիւն դարձնելու։ Ետոյ նոյն
տեղովն անցաւ մի ղևտացի (տիրացու)։ Նա ևս
տեսաւ և անցաւ, գնաց։ Եկաւ մի սամարացի ճա-
նապարհորդ։ Բայց սա, երբ տեսաւ նրան, խղճաց.
իջաւ գրաստից. վերքերը փաթաթեց. վրան ձէթ
դրաւ. գինի խմացրեց. գրաստի վրայ դրաւ և
մօտիկ իջկանը հասցրեց։ Հետեւալ օրը՝ երբ պէտք
է հեռանար, իջկանի տիրոջը երկու դահեկան
տուաւ և ասաց. «Խնամք տար սրան, եթէ աւելի

ծախս անես, վերադարձիս կվճարեմ:

Սրանից ետոյ Յիսուս հարցրեց օրինակա-
նին. «Ասա ինձ, այն երեքից որն է ընկեր եղել
աւագակների ձեռն ընկած մարդուն»: Օրինականն
ասաց. «Նա՛ որ ողորմութիւն արաւ՝ խղճաց»: Յիսուս ասաց. «Գնա՛, դու էլ այնպէս արա՛»:

3. Ո Ր Ո Մ Ի Ա Ռ Ա Կ Ը

Յիսուս մի ուրիշ առակ էլ պատմեց—մի
մարդ իւր արտումը բարի սերմը ցանեց: Բայց
երբ մարդիկ քնեցին, թշնամին ծածուկ եկաւ,
արտի մէջ որոմներ ցանեց ու գնաց: Երբ սերմը
բուսաւ, պտուղ տուաւ, որոմն էլ հետը երևեցաւ:

Տան տիրոջ ծառաները մօտ եկան և ասա-
ցին. «Տէր, դու քո արտումը բարի սերմը չցա-
նեցիր, որոմները ո՞րտեղից են»: Նա պատասխա-
նեց և ասաց. «Այդ թշնամի մարդու արածն է»: Ծառաներն ասացին. «Իրաւունք տուր, որ գնանք
դուրս հանենք»: Նա պատասխանեց. «Ո՛չ, չլինի
թէ որոմը քաղելիս, ցորենն էլ հետը արմատից
հանէք, թողէք երկուսն էլ միասին մեծանան մին-
չև հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հնձոր-
ներին, որ առաջ որոմները քաղեն և խուրձ կա-
պեն՝ այրելու համար, իսկ ցորենը ժողովեն իմ
ամբարի մէջ»:

4. Ա Յ Գ Ո Ւ Մ Շ Ա Կ Ն Ե Ր Ի Ա Ռ Ա Կ Ը

Մի մարդ առաւօտը վաղ դուրս եկաւ իւր
այգու համար մշակներ վարձելու: Մշակների հետ
օրը մի դահեկանի (60 կոպէկ) խօսելով՝ ուղար-
կեց իւր այգին: Ժամը երեքի (9) մօտ դուրս եկաւ,
տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում
անգործ կանգնել էին, ասաց նրանց. «Դուք էլ
գնացէ՛ք իմ այգին և ինչ որ արժան է, կստա-
նաք»: Նրանք էլ գնացին: Դարձեալ հրապարակ
դուրս եկաւ ժամը վեցին (12), իննին (3) և ուոյն-
պէս արաւ: Ժամը տասնևմէկի (5) մօտ դուրս
եկաւ, ուրիշ պարապ մշակներ գտաւ և ասաց
նրանց. «Ամբողջ օրն ինչո՞ւ էք այստեղ պարապ
կանգնել»: Մշակներն ասացին. «Որովհետեւ մեզ
ոչ ոք չվարձեց»: Այն ժամանակ տանուտէրն ա-
սաց. «Դուք էլ գնացէ՛ք իմ այգին և ինչ որ ար-
ժան է, կստանաք»:

Երեկոյեան՝ այգու տէրը վերակացուին ա-
սաց. «Կանչիր մշակներին և տո՛ւր նրանց վարձը՝
ժամը իննին եկողներից սկսած մինչև առաւօտը
վաղ եկողները: Ժամը տասնևմէկին եկողները
մօտեցան և մի-մի դահեկան ստացան: Ամենից
վաղ եկող մշակները կարծում էին, թէ աւելի
կստանան, բայց նրանք էլ մի-մի դահեկան ստա-

ցան: Սրանք տանտիրոջից տրտնջացին և ասացին: «Մենք օրուայ շոր ժամանակն ենք աշխատել, իսկ դրանք հով. մենք երկար ժամանակ ենք աշխատել, իսկ դրանք՝ մի ժամ միայն—միթէ կարելի է բոլորին էլ հաւասար վարձատրել»: Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. «Ընկեր, ես քեզ չեմ զրկում, չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանով համաձայնեցար. քո վարձն ան և զնա. ես կամենում եմ, որ այն ուշ եկողին էլ քեզ չափ տամ. միթէ ես իշխանութիւն չունեմ իմ փողի հետ այնպէս վարուելով՝ ինչպէս իմ ցանկութիւնն է. ինչո՞ւ ես նախանձում, որ ես առատաձեռն եմ»:

Այսպէս ետինները կրինեն առաջին, իսկ առաջինները՝ ետին:

5. ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդ օտար երկիր էր գնում: Կանչեց ծառաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց—մէկին հինգ քանքար (10,000 ուռք.) տուաւ, միւսին՝ երկու (4,000), իսկ երրորդին՝ մի՝ (1,000) իւրաքանչիւրին իւր շնորհքի համեմատ և շտապով հեռացաւ:

Հինգ քանքար ստացողը գործ դրաւ փողը

և նրանով ուրիշ հինգ քանքար էլ աշխատեց: Նոյնպէս երկու քանքար ստացողը գործ դրաւ և երկու քանքար էլ աշխատեց: Իսկ մի քանքար ստացողը գնաց, գետինը փորեց ու տիրոջ տուած քանքարը թագցրեց, գործ չդրաւ:

Մի քանի ժամանակից ետոյ ծառաների տէրը վերադարձաւ և նրանցից հաշիւ պահանջեց: Հինգ քանքար ստացողն եկաւ և աշխատած հինգ նոր քանքարը տիրոջը տալով՝ ասաց. «Տէր, դու ինձ հինգ քանքար տուիր, ես դրանով գործ սկսեցի և ահա ուրիշ հինգ քանքար էլ աշխատեցի»: Տէրն ասաց նրան. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ փոքր գործի մէջ հաւատարիմ եղար, մեծ գործերի վրայ կառավարիչ կնշանակեմ—եւ այսքան տարի հեռացել էի տանից, հիմա, որ վերադարձել եմ, իմ բարեկամների համար մեծ ճաշ եմ պատրաստել, որ միասին ուրախանանք, դու էլ համեցէք՝ մասնակից եղիր այդ ուրախութեանը»: Մօտ եկաւ երկու քանքար ստացողն և ասաց. «Ինձ երկու քանքար տուիր, տէր, ահա ուրիշ երկուսը ևս աշխատել եմ դրանով»: Տէրը նրան էլ ասաց. «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ փոքր գործի մէջ հաւատարիմ եղար, մեծ գործերի վրայ կառավարիչ կնշանակեմ, եկ, դու էլ մասնակից եղիր այդ ուրախութեանը».

Մօտ եկաւ մի քանքար ստացողն և ասաց.

«Տէր, ես գիտէի, որ դու խիստ մարդ ես—հրն-
ձում ես այն տեղից, ուր չես ցանել և հաւա-
քում ես, ուր չես փռել, ուստի վախեցայ քեզ-
նից, քո քանքարը գետնի մէջ թաղեցի—ահա
քեզ քո տուածը»։ Տէրը բարկացաւ նրա վրայ և
ասաց. «Չար և վատ ծառայ, երբ դու գիտէիր,
որ ես հնձում եմ այնտեղից, ուր չեմ ցանել և
հաւաքում, ուր չեմ փռել, ինչո՞ւ իմ փողը ստա-
ցար, ինչո՞ւ չյանձնեցիր սեղանաւորին, որ ես այ-
ժըմ տոկոսով պահանջէի նրանից»։ Իսկոյն հրա-
մայեց ծառաներին և ասաց. «Առէ՛ք դրանից այդ
մի քանքարը և տուէ՛ք տասն քանքար ունեցո-
ղին, իսկ այս անպիտան ծառային պատժեցէ՛ք և
ձգեցէ՛ք մութ սենեակը, թող այնտեղ լաց լինի
և ատամները կրճտացնէ»։

6. ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

Մի հարուստ մարդ հագնում էր թանկագին
շորեր ու ամեն օր փառաւոր կեանք էր վարում։
Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անունով՝
հարստի դրանն ընկած. սա վէրքերով լիքն էր
և կերակրւում էր նրա սեղանից թափուած փըշ-
րանքներով։ Շները գալիս և լիզում էին նրա
վէրքերը—մարդիկ մոռացել էին նրան։

Աղքատը մեռաւ։ Հրեշտակները տարան նը-
րան արքայութիւն՝ հէնց Աբրահամի գողը։ Հա-
րուստն էլ մեռաւ, բայց սա դժոխք գնաց։ Երբ սա
այնտեղ աչքերը բաց արաւ և հեռուից տեսաւ
Ղազարոսին Աբրահամի գողում նստած՝ ասաց.
«Հայր Աբրահամ, խղճա ինձ, ուղարկիր Ղազա-
րոսին, որ մատի ծայրը ջրով թաց անէ և իմ պա-
պկած լեզուն հովացնէ, ես այս կրակի բոցերի
մէջ այրվում եմ»։ Աբրահամը պատասխանեց և
ասաց. «Դու քո կենդանութեան ժամանակ վայե-
լում էիր երկրային բոլոր բարութիւնները, իսկ
Ղազարոսը չարչարւում էր. այժմ նա այստեղ
պիտի ուրախանայ, իսկ դու տանջուես»։ Բացի
դրանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այն-
պէս որ՝ ոչ մեր մօտից ձեր մօտ կարելի է անց-
նել և ոչ ձեր մօտից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Աղաչում եմ, հայր, ու-
ղարկիր Ղազարոսին մեր տուն. ես հինգ եղբայր
ունեմ. թող գնայ, գոնէ նրանց զգուշացնէ, որ
նրանք էլ չգան այս տանջանքի տեղը»։ Աբրահա-
մը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս և մար-
գարէներ, թող նրանց լսեն»։ Հարուստը պատաս-
խանեց, «Ոչ, հայր Աբրահամ, եթէ մեռելներից
մինը գնայ, նրան աւելի կլսեն»։ Աբրահամը կրկ-
նեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լը-
սում, եթէ մեռելներից մինը յարութիւն էլ առ-
նէ և նրանց մօտ գնայ, դարձեալ չեն հաւատայ»։

7. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ

Հրէաների Հերովդէս թագաւորի ժամանակ մի բահանայ էր ապրում՝ անունը Ջաքարիա: Նորա կնոջ անունը Եղիսաբէթ էր: Երկուսն էլ արդար էին—Աստծու բոլոր պատուիրանները ճշտութեամբ կատարում: Նրանք զաւակ չունէին և ծերացած էին:

Մի անգամ իւր հերթին տաճարը մտաւ խընկարկելու՝ աղօթելու համար: Ժողովուրդը դուրսն աղօթում էր: Խնկարկելու ժամանակ հրեշտակը երևաց Ջաքարիային: Նա լռիստ վախեցաւ:

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Ջաքարիա, Աստուած աղօթքդ լսեց, քո կին Եղիսաբէթը մի որդի կունենայ, նրա անունը Յովհաննէս կդնես. նա Աստծու առաջ մեծ մարդ կլինի և իսրայէլի որդիներից շատերին դէպի ճշմարիտ Աստուածը կղարձնէ. նա կքարոզէ և նրա համար ժողովուրդ կպատրաստէ»:

Ջաքարիան պատասխանեց հրեշտակին. «Այդ ի՞նչպէս կարելի է, ես էլ, կինս էլ ծերացած ենք»: Հրեշտակը պատասխանեց. «Իմ անունն է Գաբրիէլ, ես Աստծու ծառան եմ. նա ինձ ուղարկեց, որ քեզ աչքալոյս տամ, բայց որովհետեւ ինձ չը հաւատացիր, համը կ'առնես՝ մինչև որ իմ ասածները կկատարուի—դու մի որդի կունենաս»:

Ջաքարիան պապանձուեց, իսկ ժողովուրդն ապաստում էր նրան և դարմանում, որ այդքան ուշացաւ: Երբ տաճարից դուրս եկաւ, այլ ևս չէր կարողանում խօսել: Ջաքարիան նշաններով էր խօսում ժողովրդի հետ: Երբ նրա հերթը վերջացաւ, վերադարձաւ տուն:

Մի տարուց ետոյ Եղիսաբէթը մի որդի ունեցաւ: Երբ նրա դրացիները և ազգականները լսեցին, որ Աստուած մեծ ողորմութիւն է արել, շատ ուրախացան:

Եօթն օրից ետոյ, հրէաների սովորութեան համաձայն, պէտք է մանկանն անուն դնէին և կամենում էին Ջաքարիա անուանել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրա անունը Յովհաննէս պէտք է լինի: Բարեկամները պատասխանեցին նրան, որ քո ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի: Վերջն ամենքն էլ հօրը դիմեցին, թէ նա ինչ անուն կցանկանայ դնել:

Այն ժամանակ թուղթ չկար: Ջաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց. «Յովհաննէս է սրա անունը»: Իսկոյն լեզուն բացուեց—խօսում և օրհնում էր Աստծուն: Ամենքն էլ դարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ի՞նչ պէտք է դառնաց այս մանուկը»:

Մանուկ Յովհաննէսը հասակով մեծանում

էր և հոգւով զօրանում: Նա ապրում էր անապատում:

Երբ Յովհաննէսը 30 տարեկան դարձաւ, Աստուած հրամայեց նրան Յորդանանի կողմերը գնալ և քարոզել: «Ապաշխարեցէք, մեղքներիցդ ետ կանգնեցէք, որովհետեւ երկնքի թագաւոր Քրիստոսը գալու է շուտով»: Յովհաննէսը շատ պարզ կեանք էր վարում—նրա շորերը ուղտի բրդից էին. գօտիկը կաշուից, իսկ կերակուրը մարախ և վայրի մեղր էր: Յովհաննէսի մօտ էին գնում երուսաղէմացիները, չրէաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից և խոստովանում էին իրանց մեղքերը: Ով տապաշխարում էր և խոստանում էր իւր մեղքերը չկրկնել, Յովհաննէսը լողացնում, մկրտում էր նրան Յորդանան գետի մէջ և ասում էր—ես քո մարմինը մաքրեցի ջրով, գնահ, դու էլ քո սիրտը մաքրիր ապաշխարութիւնով:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Կրկնել պատմութիւնը և ապա

Ե Ր Գ Ջ Ր Օ Ր Ն Ն Ա Գ

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտ-
նեալ,

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ՝
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Չառնոյր Կարապետ զմկրտիլն ի յանձն:

Ո՛րքան զարմանալի է մեզ յայտնուած այս մեծ խորհուրդը—արարիչ Աստուածը Յորդանան գալով՝ կամենում էր մկրտուիլ իւր ծառայից: Բայց կարապետ Յովհաննէսը յանձն չէր առնում մկրտելը:

Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր.
Գետ, մի զարհուրիր, քո Արարիչն եմ ես.
Եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս:

Յորդանանն այս բանը լսելով՝ փախչում էր: Վտակը վտակի ետեից էր գնում (այս խորհուրդը յայտնելու համար): Գետ, մի զարհուրիր, ես քո ստեղծողն եմ, եկել եմ, որ մկրտուիմ և լուանամ մեղքերը (ուրիշների):

Այսօր ձայնն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական,
Սիրեցելոյ որդւոյ վկայ,
Այ յորդորէ,
Գետ յորդորէ
Գետ Յորդանան:
Յորդորական ձայնիւ երգէր
Մեծ կարապետն Յովհաննէս:

Այսօր հայր Աստծու հաճութեան ձայնը լսուած է
երկնքից և վկայուած է իւր սիրելի Որդու մասին: Այ յոր-
դորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան: Յորդորական
ձայնով էր երգուած մեծ կարապետ Յովհաննէսը:

9. ՅԻՍՈՒՍԻՆ ԸՆԾԱՅՈՒՄ ԵՆ ՏԱՃԱՐԻՆ

Հրէաների մէջ այս տեսակ մի սովորութիւն
կար—երեխայի ծննդից քառասուն օր ետոյ՝
Մովսէսի օրէնքի համաձայն, եթէ մանուկն արու
էր և անդրանիկ, ծնողները տանում էին Երու-
սաղէմ, ընծայում էին տաճարին և ետոյ զոհ
անելով՝ ետ էին գնում: Հարուստները բերում
էին գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի:
Յիսուսի ծնողներն աղքատ էին, դրա հա-
մար էլ մի զոյգ աղաւնի տարան:

Այդ միկնոյն ժամանակում Երուսաղէմում

բնակւում էր մի արդար ծերունի մարդ, որի ա-
նուն էր Սիմէօն: Նա Սուրբ Հոգուց իրաւունք
էր ստացել չմեռնել՝ մինչև որ աշխարհիս Փրկի-
չին՝ Յիսուս Քրիստոսին տեսնէ: Երբ Յիսուսին
տաճար բերին, Սուրբ Հոգու ազդմամբ նա ևս
եկաւ այնտեղ. մանկանը գիրկն առաւ. օրհնեց
և ասաց, «Տէր, այժմ կարող եմ մեռնել, որով-
հետեւ ես տեսայ իմ սպասած Փրկչին»: Ծնող-
ները զարմանում էին ծերունու խօսքերի վրայ:
Սիմէօնն օրհնեց Յիսուսին և Մարիամին:

Տաճարում Աննա անունով մի այրի կին ևս
կար. նա մարգարէութիւն էր՝ 84 տարեկան. տա-
ճարից ոչ մի ժամանակ չէր հեռանել. իւր օրերը
ծոմով և աղօթքով էր անցկացնում ու գիշեր ցե-
րեկ ծառայում էր Աստծուն: Երբ սա Յիսուսին
տեսաւ, շնորհակալութիւն արաւ Աստծուն և
պատմում էր ամենին, որ նա տեսել էր անու-
ցեալ Մեսիային:

Ամեն տարի փետրուար ամսի 14-ին տօնում
ենք Յիսուսի տաճարին ընծայելը: Տօնի անունն
է Տեառնընդառաջ, որովհետեւ Սիմէօն ծե-
րունին Յիսուսի (Տիրոջ) առաջ դուրս եկաւ:

Տ ա ղ Տ ե ա ո ն ը ն դ ա ո ա ջ ի

Քրիստոս փառաց թագաւոր,
Այսօր եկեալ յընծայումն՝
Կատարելով նա զօրէնս
Քառասնօրեայ գալստեամբն:

Փառքի թագաւոր Քրիստոսը կատարելով օրէնքը,
եկաւ տաճարին ընծայուելու՝ քառասնօրեայ հասակում:

Զոր մարգարէն Նսայի
Յառաջագոյն գուշակեաց
Երուսաղէմ քաղաքին,
Սիմէօնի ծերունւոյն:

(Այն), որ մարգարէն առաջուց գուշակեց Երուսա-
ղէմ քաղաքին, Սիմէօն ծերունուն:

10. ՅԻՍՈՒՍ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍՍԱՂԷՄ

Յիսուս Բեթանիա գիւղից Երուսաղէմ եկաւ:
Երբ Զիթենեաց լերան մօտեցաւ, աշակերտ-
ներէից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք այս
մօտիկ գիւղը. այնտեղ կգտնէք մի կապած էշ.
բացարէք և բերէք»: Աշակերտները գնացին և

այնպէս արին, ինչպէս Յիսուսը հրամայել էր—բե-
րին էշը և իրանց հանդերձները վրան ձգեցին:
Յիսուս նստեց նրա վրայ: Մեծ բազմութիւն
էր դուրս եկել նրա առաջ: Շատերն իրանց
հանդերձները ճանապարհի վրայ էին փռում,
մի քանիսն էլ ծառից ճիւղեր էին կտրում ու
ճանապարհի վրայ փռում:

Յիսուս Զիթենեաց սարից իջնելիս՝ աշա-
կերտներն սկսեցին փառաբանել Աստծուն այն
ամենի համար, ինչ որ տեսնում էին: Ժողովըր-
դից շատերն էլ, երբ տեսան, որ Յիսուս Երուսա-
ղէմ է մտնում, արմաւենու ճիւղեր վեր առան
և դուրս եկան նրա առաջ:

Երբ Յիսուս լերան կատարին հասաւ, որտե-
ղից քաղաքը երևում էր, ասաց. «Երուսաղէմ,
Երուսաղէմ, երանի դու գոնէ այսօր զգայիր, թէ
որն է քո օգուտը, բայց այդ բանը դու չես
տեսնում: Կգան օրեր, երբ քո թշնամիները չորս
կողմից կպատեն. քեզ հիմնայատակ կանեն. որ-
դիքդ քո մէջ կկոտորեն ու չեն թողնիլ, որ քո
քարը քարի վրայ կանգնէ»:

Ժողովուրդը շրջապատել էր Յիսուսին. աղա-
ղակում էր և ասում. «Ո՛վսաննայ Դաւթի որդուն,
օրհնեալ է Աստծու անունով եկող թագաւորը»:
Իսկ երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը շար-
ժուեցաւ. ամենքն էլ հարցնում էին իրար. «Ո՛վ

է սա»։ Հետը եկող ժողովուրդը պատասխանում էր. «Սա Նազարէթի մարգարէ Յիսուսն է»։

Հայոց եկեղեցին Ձատկից մի շաբաթ առաջ՝ կիւրակէ օրը տօն է կատարում այդ օրուայ յիշատակի համար—տօնի անունն է Ծաղկազարդ։ Այդ օրը եկեղեցում ուռնենու կանաչ ճիւղեր են բաժանում, որ յիշեցնում է նախկին ձիթենին և արմաւենին։

Հարական Ծաղկազարդի

Յորժամ եկն Յիսուս
յերուսաղէմ ի քաղաքն,
Ընդառաջելին ծերքն ոստովք ձիթենեօք
եւ զԱստուածորդին փառաւորէին։

Երբ Յիսուս Երուսաղէմ քաղաքն եկաւ, ծերերը նրա առաջ դուրս եկան՝ ձեռներին բռնած ձիթենու ճիւղեր և փառաբանում էին Աստուծոյ որդուն (Յիսուսին)։

Ի լեռնէն Ձիթենեաց
Տարածանէին մանկունքն զհանդերձս
իւրեանց
եւ ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին
Աստուածորդւոյն՝ սուրբ թագաւորին։

Ձիթենեաց սարիցն սկսած երբայցեւոց մանուկները փռում էին իրանց հանդերձները ճանապարհի վրայ, ծառերից ճիւղեր էին կտրում և տալիս Աստուծոյ որդի թագաւորին (Յիսուսին)։

Ոստովք և տերեւալ ձիթենեօք
Երբայցեւոց մանկունքն օրհնէին,
Ուրախ լեր Երուսաղէմ քաղաք
եւ ցնծա՝ Սիօն մայր եղեղեցի։

Երբայցեւոց մանուկները ոստերով և տերեւազարդ ձիթենիներով օրհնում էին և ասում. «Ուրախացի՛ր, Երուսաղէմ քաղաք և ցնծա մայր եկեղեցի Սիօն։

11. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Կրկնել Յիսուսի խաչելութիւնը (տես Ա. տարի)

Երբ Պիղատոսը հաստատեց հրէաների վճիռը, զինուորները հանեցին Յիսուսի կարմիր վերարկուն և հագցրին իւր շորերը ու տարան խաչելու։ Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը։

Երբ Գողգոթա կոչուած սարին հասան, Յիսուսին խաչեցին ժամը երեքին (9)։ Նրա հետ խաչեցին երկու չարագործների էլ—մինին աջ,

իսկ միւսին՝ ձախ կողմում: Յիսուսն ասաց խաչի վրայից. «Ներքի՛ր դրանց, Հայր, որովհետեւ իրանք էլ չգիտեն, թէ ինչ են անում»: Պիղատոսը մի տախտակ կախել տուաւ խաչի վերեւից: Տախտակի վրայ գրած էր—Յսուս Նազովրեցի թագաւոր Հրէից (Յ. Ն. Թ. Հ.): Այս տախտակը հրէաներից շատերը կարդացին: Քահանայապետները բարկացան այս բանի վրայ, գրեցին Պիղատոսի մօտ և ասացին. «Մի՛ գրիր, թէ Յիսուս հրէաների թագաւոր էր, այլ գրիր, որ ինքն էր ասում, թէ ես հրէաների թագաւոր եմ»: Պիղատոսը բարկացած պատասխանեց. «Ինչ որ գրեցի, գրեցի»:

Զինուորները ծաղրում էին նրան և ասում. «Եթէ՛ դու ես հրէաների թագաւորը, խաչիցն իջիր»: Անցուղարձ անողները հայհոյում էին նրան և գլուխները շարժելով՝ ասում էին. «Ո՛վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատի՛ր քեզ, եթէ Աստծու որդի ես և իջիր խաչիցը»:

Այսպէս էլ բահանայապետներն էին անում դպիրների ու ծերերի հետ միասին և ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ որ նա հրէաների թագաւորն է, թող իջնէ խաչիցը, կհաւատանք նրան»:

Խաչուած չարագործներից մինը ևս հայհոյում էր նրան և ասում. «Եթէ՛ դու ես Քրիստոսը, փրկիր քո անձն էլ, մեզ էլ», իսկ միւսը բար-

կանալով պատասխանեց նրան և ասաց. «Դու չե՞ս վախենում Աստծուց, չե՞ որ ինքդ էլ նոյն պատժի մէջն ես»:

Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նրա մարը, մօրաքոյրը և Մարիամ Մագդաղենացին: Յիսուս տեսնելով իւր մօրը և Յովհաննէս աշակերտին, մօրը մխիթարելու համար՝ ասաց. «Ահա քո մայրը»: Այն ժամանակից սկսած աշակերտը իրա մօտ առաւ Մարիամին:

Ժամը վեցին (12) խաւար իջաւ երկրի վրայ. ժամը իննի (3) դէմ Յիսուսը բարձր ձայնով աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ինձ մենակ թողիր»: Սրանից ետոյ Յիսուսն ասաց. «Ծարաւ եմ»: Զինուորներից մինը վերցրեց սպունգը. թաթախեց քացախի մէջ և եղեգնի ծայրին դրած՝ մօտեցրեց նրա բերանին, որ սրանով նրա ցաւը փոքր ինչ մեղմէ:

Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ասաց. «Հայր, դու ինձ ինչ որ պատուիրել էիր, կատարեցի, այժմ հոգիս քեզ եմ տալիս»: Այս ասելով՝ խոնարհեցրեց գլուխը և հոգին աւանդեց: Իսկոյն արեւը խաւարեց. երուսաղէմի տաճարի վարագոյրը վերեւից մինչև ներքև պատառուեց. երկիրը շարժուեց. ժայռերը պատառուեցան և գերեզմանները բացուեցան: Հարիւրնապետը և պահապանները, երբ տեսան այս բանը, ասացին. «Ճշմարիտ որ սա Աստծու որդի էր»: Ժողովուրդը, որ

խաչելութիւնը տեսնելու համար էր եկել, եղած-
ները տեսնելով՝ զղջում էր, կուրծը ծեծում և
ետ դառնում:

12. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կրկնել Յիսուսի թաղումն և յարութիւնը (Տես Բ. տարի):

Շ ա ր ա կ ա ն Թ ա դ մ ա ն

Պարգևատուն ամենեցուն
Այսօր խնդրի պարգևս ի Պիղատոսէ
Եւ արկողն զլոյս որպէս զօթոց
Հաւանի պատիւ ի Յովսէփայ:

Ամենին պարգև տուողն այսօր ինքը որպէս պարգև
է խնդրուով Պիղատոսից: Եւ նա, որ լոյսն իբրեւ հանդերձ
ունէր հազած, յանձն է առնում Յովսէփից պատանուի:

13. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄ ԲԱՐՁՈՒՄՆ

Կրկնել Յիսուսի համբարձումն (տես Բ. տարի)

Շ ա ր տ կ ա ն Հ ա մ ք ա ր ծ մ ա ն

Համբարձաւ Տէրն մեր յերկինս՝

Ասելով աշակերտացն.

Նստարուք ի քաղաքիդ յերուսաղէմ՝

Մինչև զգգնուցուք զգորութիւն ի պարճանց:

Մեր Տէրը երկինք համբարձաւ՝ ասելով աշա-
կերտներին. Երուսաղէմ քաղաքում մնացէ՛ք՝ մինչև եր-
կնքից գորութիւն (Ս. Հոգւոյ շնորհը) կստանաք:

14. Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Կրկնել Հոգոգալուստը (Տես Բ. տարի):

Շ ա ր ա կ ա ն Հ ո գ ե գ ա լ ս տ ե ա ն

Առաքելոյ աղաւնոյ
Իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց
Ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց
զանկիզելի զաշակերտսն՝
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատան:

Ուղարկուած աղանին վերեւից բարձր ձայնով ի-
ջաւ. նա որպէս լուսոյ փայլ, առանց այրելու՝ ոգևո-
րեց աշակերտներին, երբոր վերնատանը նստած էին:

15. ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Հոգեպալստից ետոյ՝ կարճ ժամանակուայ մէջ հաւատացեալների թիւն այնքան բազմացաւ, որ առաքեալներն այլևս չէին կարողանում հոգ տանել նրանց, ուստի ընտրեցին իրանց համար եօթն օգնականներ կամ սարկաւագներ: Դրանցից մինն էր Ստեփաննոսը:

Սա մի շնորհալի մարդ էր—այնպէս էր քարոզում աւետարանը, որ ամենին էլ Քրիստոսի հետևող էր դարձնում: Հէնց դրա համար էլ շատերը նախանձում էին և նրան հակառակ խօսում, բայց Ստեփաննոսը Սուրբ Հոգւոյ շնորքով լցուած՝ ամենին էլ յաղթում էր: Թշնամիները երբ տեսան, որ խելքով նրան չեն կարողանում յաղթել, սկսեցին բամբասել, սուտ վկաներ գրտան՝ որպէս թէ նրանք լսել են Ստեփաննոսի բերանից ասելիս, թէ նազովրեցի Յիսուսը կքանդէ Նրոսաղէմի տաճարը և Մովսիսի օրէնքները կփոխէ:

Սրա համար Ստեփաննոսին ատեան տարան և զանգատուեցին նրանից: Քահանայապետը հարցրեց. «Ինչ որ քեզ վրայ ասում են, ճիշտ է արդե՞օր»: Ստեփաննոսը գեղեցիկ կերպով խօսեց և ցոյց տուաւ, որ ինքը Աստծու և նրա ծառայ Մովսիսի օրէնքները սիրում և կատարում է. ընդ-

հակառակը նրանք են Աստծու օրէնքները չկատարողը և սրտով էլ շատ հեռի են նրանից:

Այս բանի վրայ թշնամիները խիստ բարկացան: Ստեփաննոսն ամենևին չէր վրդովւում—խաղաղ, հանգիստ էր, նրա երեսին նայողը կըկարծէր թէ հրեշտակ լինի: Ս. Ստեփաննոսը երկինքը նայեց և ետոյ ասաց. «Ահա ես տեսնում եմ երկինքը բացուած և Յիսուս հայր Աստծու աջ կողմում նստած»:

Այս որ լսեցին, ականջները ծածկեցին, բարձր ձայնով սկսեցին աղաղակել և յարձակուել Ստեփաննոսի վրայ: Նրան դուրս տարան քաղաքից, շորերը հանեցին և պահ տուին մի ջահէլ մարդու, որի անունն էր Սաւուղ: Ետոյ քարեր վեր առան և սկսեցին քարկոծ անել նրան:

Այս քարկոծելու ժամանակ Ս. Ստեփաննոսն էլ Յիսուսի նման աղօթք էր անում իւր թշնամիների համար և ասում. «Տէր Յիսուս, առ իմ հոգին. մեղք մի համարիր սրանց արածը»: Այս խօսքերն ասաց և մեռաւ: Ս. Ստեփաննոսի քարկոծման Սաւուղն էլ մասնակից էր:

Այսպէս Ս. Ստեփաննոսն առաջինը (նախ) եղաւ, որ արիւն թափեց՝ վկայութիւն տուաւ, թէ Յիսուս Աստծու սրբին է, դրա համար էլ նախաՎկայ է կոչւում:

Ս. Ստեփաննոս Նախավկայի տօնը կատարում ենք դեկտեմբերի վերջերին:

16. ՍԱԽՈՒՂԻ ԴԱՐՁԸ

Յիսուսի հաւատացողների թիւը քանի գնում, աւելանում էր, և որքան աւելանում էր, այնքան էլ թշնամիներն էին բազմանում: Դրանցից նշանաւոր էր Սաւուղ անունով մինը: Այս այն Սաւուղն է, որ Ս. Ստեփաննոսի ապանմանն էլ մասնակից էր: Սա Երուսաղէմում մտնում էր տները, ուր հաւատացեալ էր գտնում, իսկոյն իշխանութեանն էր մատնում: Բայց նա սրանով չբաւականացաւ, գնաց քահանայապետի մօտ, իրաւունք խնդրեց, որ Դամասկոս քաղաքը գնայ և եթէ այնտեղ հաւատացեալներ գտնէ, կապած Երուսաղէմ ուղարկէ,

Դամասկոսին չհասած՝ յանկարծ երկնքից լոյս փայլատակեց: Սաւուղը երեսի վրայ ընկաւ: Երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սաւուղ Սաւուղ, ինչու ես ինձ հալածում»: Սաւուղ հարցրեց. «Ո՞վ ես, Տէր»: Ձայնը պատասխանեց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես, բայց վեր կաց. գնա քաղաք. այնտեղ կիմանաս, թէ ինչ պիտի անես»: Նրա հետ գնացող մար-

դիկը լուռ ու մունջ կանգնած էին, ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին տեսնում: Սաւուղը տեղից վեր կացաւ, Բայց ոչինչ չէր տեսնում: Նրա ձեռքից բռնած՝ տարան Դամասկոս: Նա այնտեղ քանի մի օր մնաց առանց ուտելու և խմելու:

Դամասկոսում բնակւում էր Քրիստոսի աշակերտներից մինը՝ որի անունն էր Անանիա: Աստուած ասաց նրան տեսիլքում. «Անանիա»: Նա պատասխան տուաւ և ասաց. «Աստեղ եմ, Տէր»: Տէրն ասաց. «Վեր կաց և գնա այն փողոցը, որ կոչւում է Ուղիղ. այնտեղ Յուդայի տանը հարցրու տարսոնացի Սաւուղին, նա դեռ աղօթքը չէ վերջացրել»: Անանիան պատասխան տուաւ և ասաց. «Այդ մարդու մասին շատերից եմ լսել, որ քեզ հաւատացողներին հալածում էր Երուսաղէմում. այժմս էլ քահանայապետից իրաւունք է ստացել այստեղ գալ և շղթայով կապել քեզ հաւատացողներին»: Աստուած ասաց նրան. «Գնա, նա իմ ընտրութեան անօթն է—նա կը քարոզէ հեթանոսներին և կվկայէ իմ մասին թագաւորների և խորայելի որդւոց առաջ»:

Անանիան գնաց Յուդայի տուն. ձեռք գրկին դրաւ և ասաց. «Սաւուղ եղբայր, վերև մտիկ տուր, այն Յիսուսը, որ ճանապարհին քեզ երևաց, ուղարկեց ինձ քեզ մօտ, բո աչքերը բշկելու որ Սուրբ Հոգւով լցուես»: Քրիստոնեաների հալածող Սաւուղը հաւատաց Քրիստոսին: Սաւուղը

մի քանի օր Դամասկոսում մնաց Յիսուսի աշակերտների մօտ:

Սաւուղը միւս օրն սկսաւ քարոզել Յիսուսի մասին: Նա՝ որ եկել էր հալածելու հաւատացեալներին, ինքը հատացեալ էր դարձել: Լսողները չէին հաւատում, զարմանում էին և ասում. «Սա այն մարդը չէ, որ եկել էր Յիսուսի հաւատացեալներին բռնելու և քահանայապետի մօտ ուղարկելու»: Սաւուղը և՛ս աւելի զօրանում էր և քարոզում Դամասկոսում: Դամասկոսացիք չէին կարողանում նրան պատասխան տալ, ուստի վճռեցին սպանել: Քաղաքի ղեկների մօտ պահապաններ նշանակեցին, որ չփախչէ: Այս բանն իմացան Յիսուսի աշակերտները, գիշերով քաղաքի պարսպից զամբիւղով վայր թողին և փախցրին:

Սաւուղը դարձաւ Երուսաղէմի եկաւ առաքեալների մօտ: Ոչ որ չէր ուզում հաւատալ, թէ նա Յիսուսի աշակերտ է դառել: Աշակերտներից մինը, որի անունը Բառնաբաս էր, պատմեց առաքեալներին Դամասկոսի ճանապարհին պատահածը և թէ ինչպէս Սաւուղը քարոզել է նոյն քաղաքի ժողովրդին: Այնուհետեւ Սաւուղը համարձակ կերպով քարոզում էր Երուսաղէմի մէջ նա-

զովրեցի Յիսուսի մասին: Հրէաները շատ բարկացան և մտները դրին սպանել նրան: Բայց առաքեալները խորհուրդ տուին նրան հեռանալ հայրենի Տարսոս քաղաքը:

17. ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Կրկնել Թագէոս և Բարդուղիմէոս (տես Բ. տարի):

Ս. Սանդուխտ կուսի շարականը

Քե պարծի այսօր սուրբ եկեղեցի.
Ով վկայուհի սուրբ Սանդուխտ,
Որ զհայրականն քո թողեր զպաշտօն
Վասն Քրիստոսի հեղեղ զարիւն քո սուրբ:

Ով վկայուհի Ս. Սանդուխտ, քեզանով այսօր պարծենում է Ս. եկեղեցին, որովհետեւ դու թողեցիր քո հայրական աթոռի մեծութիւնը և Քրիստոսի համար սուրբ արիւնդ թափեցիր:

18. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԽՈՐ ՎԻՐԱՊ
ՄՏՆԵԼԸ

Կրկնել յօդուածի համապատասխան հատուածը (տես
Բ. տարի)

Ս. Գրիգոր Լուսաւորչի շարական

Հարակից հոգեղինաց երկնային զօրացն
Սրբափայլ զգեստուք, տէր Գրիգորիոս,
Ի խոր վիրապին իջեր ի տղմին ի մէջ
դառնաշունչ օձիցն,
Զի փրկեսցես զմեզ ի չար վիշապէն:

Ո՛վ տէր Գրիգորիոս, դու քո մաքուր զգեստով
(անարատ վարքով) հրեշտակներին դասակից եղար. դու
իջար դառնաշունչ օձերով լիքը Խոր-Վիրապի տղմի մէ-
ջը, որպէսզի մեզ փրկես չար վիշապիցը:

19. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԽՈՐ ՎԻՐԱՊԻՅ
ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Կրկնել յօդուածի համապատասխան հատուածը
(Տես Բ. տարի):

Հայաստանեաց հայր հաւատոյ հեղինակ
ընտրեալ
Ճգնողական վարուք, տէր Գրիգորիոս,
Ի կոճեղս ոլորեալ, հոսեալ յարենէ սրունք
սրբամանեալ մարմնոյդ՝
Հաստատելով զմեզ ի վէմն հաւատոյ:

Հայաստանցիներէս հաւատոյ հայր, ո՛վ Ս. Գրիգորի-
ոս, դու քո ճգնողական վարքովը ընտրուեցիր հեղի-
նակ՝ սուրբ մարմնիդ սրունքները կոճղի մէջ արիւնա-
քամարիւր, որպէսզի մեզ հաստատես հաւատոյ վիմի
վրայ:

Տանն Աստուծոյ տեսանող բարի
Արժանացեալ շնորհիւ, տէր Գրիգորիոս,
Կործանիչ բազնեաց, քակտիչ մեհենեաց
զօրութեամբ խաչին,
Քահանայապետ ընտրեալ աստուածային
յայտնութեամբ:

Ով տէր Գրիգորիոս, դու քո ստացած շնորհով
Աստծու տանը (եկեղեցուն) բարի կառավարիչ եղար.
խաչի զօրութեամբ բազիններն ու մեհենները քանդե-
ցիր ու քահանայապետ ընտրուեցար աստուածային
յայտնութեամբ:

20. Ս. ՍԱՀԱԿ ՊԱԹԹԵԻ ԵՒ ՄԵՍՐՈՎԲ ՄԱՇՏՈՅ

Հին ժամանակ հայոց կաթողիկոսները ա-
մուսնանում էին, ուստի Գրիգոր լուսաւորչից
ետոյ կաթողիկոսութիւն էին անում նրա ժա-
ռանգները: Լուսաւորչի տան վերջին ժառանգն
էր Ս. Սահակ Պարթևը: Սա շատ խելօք և բա-
րեպաշտ մարդ էր: Թէև ամբողջ Հայաստանը
վաղուց քրիստոնեայ էր, բայց հայերէն սեփա-
կան գիր չունենալու պատճառով՝ քրիստոնէու-
թիւնը ժողովրդի համար անհասկանալի էր
մնում: Եկեղեցիներումը սուրբ գիրքը կարդա-
լու էր կամ յունաց կամ ասորաց լեզուներով:
Նոյն լեզուներով էր լինում և ժամերգութիւնը:
Սուրբ Սահակը շարունակ մտածում էր այս մա-
սին և աշխատում էր հայերէն գիր գտնել:

Սուրբ Սահակի ժամանակ կար և մի ուրիշ
մարդ, որ նոյնպէս շատ էր մտածում այդ մա-
սին—դա սուրբ Մեսրոպն էր, որին Մաշտոց
էլ են ասում: Սա գիւղացու որդի էր, ընդունակ,
աշխատասէր, լաւ գիտէր յունաց, ասորաց և
պարսից լեզուները: Ս. Մեսրոպը շատ էր սի-
րում Ս. Սահակին և երբնա կաթողիկոս եղաւ,
սա էլ վարդապետ դարձաւ:

Ս. Մեսրոպը վարդապետ դառնալով՝ քարո-
զում էր ամեն տեղ և սուրբ աւետարանը մեկ-

նում էր ժողովրդին հայերէն լեզուով: Միւս վար-
դապետներն այդ միւսնոյնը չէին կարողանաւ
անել, որովհետև չգիտէին ոչ յունաց և ոչ ասոր-
աց լեզուները:

Այդ բանին մի ճար անելու համար Ս. Սա-
հակի խորհրդով ուսումնական մարդկանցից մի
ժողով եղաւ վաղարշապատում: Այստեղ մեր
Վռամշապուհ Թադաւորն ասաց, որ ինքը լսել
է Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ
կան հայերէն տառեր: Ժողովը մարդ ուղարկեց
այդ եպիսկոպոսի մօտ և բերել տուաւ տառերը,
բայց որովհետև այդ տառերը լրիւ չէին, նրան-
ցով չկարողացան հայաց լեզուի բոլոր հնչիւն-
ներն արտայայտել: Սրանից ետոյ Ս. Մեսրոպը
գնաց զանազան գիտնականների մօտ և աշխա-
տեց նրանց օգնութեամբ հայոց տառեր գտնել,
բայց այդ բոլոր աշխատանքն ի զուր անցաւ, ոչ
ոք չկարողացաւ օգնել նրան:

Մարդկանցից յոյսը կտրած՝ Ս. Մեսրոպն
սկսեց ջերմեռանդ կերպով աղօթք անել և խընդ-
րել Աստծուն, որ օգնէ իրան հայերէն տառեր
գտնելու: Այդ ժամանակ Ս. Մեսրոպը այնքան
էր մտածում տառերի մասին, որ էլ ուրիշ ոչինչ
չէր լսում և տեսնում: Նա ոչ արթուն էր և ոչ
քնած: Եւ անա այդ դրութեան մէջ նրան մի
ձեռք երևաց և գրեց տառերը: Այդ տառերի ձևը

Ս. Մեսրոպը մտքում պահեց և սթափուելուց ետոյ՝ տախտակի վրայ նշանակեց:

Երբ Ս. Սահակը և Վռամշապուհը լսեցին, որ Մեսրոպը գտել է տառերը և գալիս է, մեծ բազմութիւնով դուրս եկան նրա առաջը, պատուով ընդունեցին և բերին Վաղարշապատ բաղաբը:

Տառերը գտնելուց ետոյ Ս. Սահակը և Մեսրոպը Վռամշապուհի օգնութիւնով սկսեցին ուսումնարաններ բաց անել և հայ մանուկներին հայերէն տառերով գրել ու կարդալ սովորեցնել: Եկեղեցում ժամերգութիւնը հայերէն էր լինում և աւետարանը հայերէն կարդացւում: Ժողովուրդը մինչև հիմա եկեղեցի գնալով բան չէր հասկանում, այժմ խիստ ուրախ էր, որ ժամերգութիւնը հասկանալի էր նրան:

Բացի դրանից Ս. Սահակը հայերէն լեզուով գրեց շարականներ՝ եկեղեցում երգելու համար. յօրինեց շարականների ութը եղանակները, որ մինչև հիմա էլ երգում ենք մեր եկեղեցում.

Շարական Ս. Սահակայ

Որ յարմատոյ հարցն սրբոց մեզ գաւազան բղխեցեր, զիսահակ սուրբ հայրապետն, հովուել զհօտ քո Քրիստոս

(Տէր), դու սուրբ հայրերի ցեղից Ս. հայրապետ Սահակին մեզ հովուող գաւազան (կաթողիկոս) տուիր, (ժողովուրդ), եկէք վերապատուենք նրան:

Որ զխաւարն անգիտութեան Հայաստանեացս լուծեր, զիմաստութեան ծագեալ զլոյս սովաւ որդւոցս Թորգոմայ:

Դու հայաստանցիներիս տգիտութեան խաւարը փարատեցիր և նրա (Ս. Սահակի) միջոցով Թորգոմայ որդւոց համար իմաստութեան լոյսը ծագեցրիր:

21 Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ի Չ Ն Ե Ր

Ինչքան որ հայոց ուսումնարանների թիւը շատանում էր և եկեղեցիներում հայերէն էին կարդում ու երգում, այնքան էլ յոյների նախանձը աւելի էր շարժւում. նրանք ուզում էին, որ առաջուայ նման էլի յունաց լեզուով կարդան և երգեն հայոց եկեղեցիներում:

Այդ ժամանակ Հայաստանը բաժանուած էր երկու մասի—մի մասը պարսիկների իշխանութեան տակն էր, իսկ միւս մասը՝ յոյների: Չնայելով որ հայերը հարկ էին տալիս, բայց ամեն մի մասի թագաւորը հայ էր լինում:

Յունաց մասի Հայաստանում յոյները չէին

Թողնում հայերին ոչ ուսումնարան բաց անել և ոչ էլ եկեղեցիներում հայերէն կարդալ ու երգել: Սրա համար Ս. Սահակը նամակ գրեց Կոստանդնուպօլիս յոյների կայսրին և պատրիարքին ու խնդրեց, որ նրանք ևս թոյլ տան իրանց մասի Հայաստանում ուսումնարաններ բանալ՝ հայերէն սովորեցնելու և եկեղեցիներում հայերէն ժամերգութիւն անելու համար: Բացի դրանից Ս. Սահակը նամակ տուաւ Ս. Մեսրոպին, իւր թոռն Վարդան Մամիկոնեանին և ուղարկեց նրանց Կ. Պօլիս: Նրանց հետ ուղարկեց շատ ընծաներ յունաց կայսեր և ուրիշ մեծամեծներին, որպէսզի սրանով շահէ նրանց սիրտը:

Յունաց կայսրը սիրով ընդունեց Ս. Մեսրոպին և Վարդանին ու կատարեց Ս. Սահակի խնդիրը: Այնուհետև յունական մասումն էլ բացուեցան շատ ուսումնարաններ, որտեղ սովորեցնում էին հայերէն, իսկ եկեղեցիներում ժամերգութիւնը լինում էր հայ լեզուով:

Ս. Սահակը և Մեսրոպը իրանց յառաջադէմ աշակերտների հետ Թարգմանեցին Սուրբ գիրքը և ուրիշ շատ գրքեր: Յառաջադէմ աշակերտներին ուղարկում էին այն ժամանակուայ մայրաքաղաքները, որ լաւ սովորեն յունաց և ասորոց լե-

զունները: Սրանք ուսումնաւարտելուց ետոյ Հայաստան դարձան և ուսումնարաններում ուսուցչութիւն էին անում. նոր գրքեր էին գրում և Թարգմանում և կամ քահանայ, վարդապետ, եպիսկոպոս դառնալով՝ Հայաստանի զանազան քաղաքներն ու գիւղերն էին գնում և քարոզում ժողովրդին: Այդ աշակերտներից նշանաւորներն են—Մովսէս Խորենացին, որ գրել է հայոց ազգի պատմութիւնը, Եղիշէ վարդապետը, որ նկարագրել է Վարդանանց պատերազմը...: Ոչ մի ժամանակ Հայաստանն այնքան առաջ չէր գնացել և լուսաւորւել՝ ինչպէս այժմ: Ոչ մի ժամանակ այնքան գրքեր չէին գրուել ու Թարգմանուել՝ ինչպէս Ս. Սահակի, Մեսրոպի և նրանց աշակերտների օրերում—դրա համար էլ այդ ժամանակը կոչւում է ոսկէ դար:

Հարական Թարգմանչաց

Որ զգիտութիւն քո գերկնային և գհոգեւոր իմաստութիւն առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռն սրբոց Թարգմանչաց, աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած:

Աստուած, դու որ քո երկնային գիտութիւնը և հոգևոր իմաստութիւնը առատօրէն տարածեցիր Հայոց

եկեղեցիներում սուրբ թարգմանիչների ձեռով, սրանց խնդիրքով ողորմիր մեզ:

22. ԱՏՈՎՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Վաւարացիները մահուանից ետոյ հայոց թագաւորութիւնը վերջացաւ և մեր երկիրը բոլորովին դարձաւ հարկատու պարսիկ թագաւորներին: Պարսիկները՝ կրակապաշտ էին, իսկ հայերը՝ քրիստոնեայ:

Այդ ժամանակ Պարսկաստանում իշխում էր Յազկերտ երկրորդը: Այս թագաւորը կամենում էր ամբողջ Հայաստանը նուաճել և բոլոր հայերին էլ իրան ծառայ դարձնել: Իւր այս միտքը յաջողեցնելու համար մտածեց, որ քրիստոնէութիւնը ջնջէ մեր երկրից, որովհետեւ նա ասում էր— քանի որ հայերը ուրիշ կրօն ունին, մեզ հետ չեն միանայ. հէնց որ նրանց կրօնը փոխենք և ստիպենք, որ նրանք էլ մեզ նման արև և կրակ պաշտեն, այն ժամանակ միայն հայերը մեր ծառաները կդառնան և նրանց երկիրն էլ մերը կլինի: Դրա համար Յազկերտը պարսիկ իշխանների և մոգպետների հետ խորհուրդ արաւ, թէ ինչ ձևով սկսեն և գլուխ հանեն այս գործը: Որոշեցին, որ թագաւորն իրան հարևան Հոնաց

դէմ պատերազմ սկսէ և իւր իշխանութեան տակ եղող հայ իշխանների և զօրքերի հետ պատերազմ գնայ, որպէսզի զօրքի և իշխանների հեռանալովը՝ մնացած հայ ժողովուրդը վախենայ և Յազկերտի հրամանին չկարողանայ հակառակել:

Շուտով Հայաստան հրաման ուղարկեցին: Հայ իշխանները չիմանալով պարսիկների մտադրութիւնը, զօրքերն առան և Պարսկաստան գնացին: Սրանց հետ միացան պարսիկ զօրքերն էլ և Հոնաց դէմ անցան: Երկու տարի շարունակ կռուեցին, բայց ոչինչ չկարողացան անել: Մենակ հայերը չէին որ պարսիկներին օգնում էին Հոնաց դէմ, էլի ուրիշ շատ քրիստոնեայ ազգեր կային: Պատերազմից ետոյ Յազկերտը հին զօրքերին իրանց երկիրներն ուղարկեց, իսկ նրանց տեղը նորերը բերել տուաւ:

Այսպէս շարունակեց եօթը տարի: Իւր մօտ եղած քրիստոնեայ իշխաններից մի քանիսին փող էր բաշխում. մի քանիսին պատիւ էր խոստանում և յորդորում էր, որ պարսից կրօնն ընդունեն: Բայց ի զուր, ոչ ոք կրօնափոխ չեղաւ:

Յազկերտը երբ տեսաւ, որ հայերը պատիւներից չեն խաբւում և իրանց կրօնը չեն փոխում, այժմ յայտնի հրաման հանեց, որ իւր իշխանութեան տակ եղող քրիստոնեաները հաւատներն ուրանան և արևին ու կրակին երկրպագութիւն տան: Իւր մօտ եղող քրիստոնեայ զօրքերին նո-

րից Հոնաց դէմ պատերազմի տարաւ և շատ չարչարեց ճանապարհին, իսկ պատերազմը վերջացնելուց ետոյ՝ էլ չթողեց, որ իրանց երկիրը դառնան, այլ դանազան տանջանքներ տալով՝ նորից ստիպում էր հաւատներն ուրանալ: Ատովմ Գնունի և մի քանի հայ իշխաններ, երբ տեսան Յազկերտի արածները և հասկացան նրա նպատակը, զօրքն առան և Հայաստան փախան, բայց պարսիկները նրանց ետեից հասան և ամենին էլ կոտորեցին: Սրանք չմոռացան իրանց պապերի կրօնը, ամենքն էլ մեռան ու մարտիրոսներ՝ նահատակներ դարձան:

Այս նահատակութիւնը Ատովմ իշխանի աշունով կոչւում է Ատովմեանց նահատակութիւն: Եկեղեցին սրանց համար առանձին տօն է սահմանել և ամեն տարի կատարում է բուն բարեկենդանի առաջին շաբաթում:

23. ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԵՒ ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յազկերտը ֆաղաթ հայ իշխաններին չթողեց, որ պարսկաստանից ետ դառնան Հայաստան: Դենշապուհ անունով մի պարսիկ իշխան մեր երկիրն ուղարկեց, որ հայերին չարչարէ և ստի-

պէ ժողովրդին Յազկերտի հրամանին հնազանդուել: Սա եկաւ, երեսանց խաղաղութիւն էր ցոյց տալիս, իսկ ծածուկ աշխատում էր Հայաստանում ֆաղաթ հայ իշխաններին միմեանց հետ կռուացնել: Հարկ դրեց եկեղեցիների վրայ. սովորական հարկերը կրկնապատկեց և այսպէս կամաց-կամաց Հայաստանը տկարացնում էր: Բայց էլի չհասան իրանց նպատակին:

Պարսիկները տեսան, որ այս տեսակ բաներով չեն կարողանում հայերին իրանց հաւատից թուլացնել, ուստի ուրիշ բան մտածեցին: Միհրներսէս հազարապետը մոգապետի խորհրդով հայերի մեծամեծներին մի նամակ գրեց, որի մէջ ցոյց էր տալիս, որ արեւաշտութիւնը՝ կրակապաշտութիւնը ճշմարիտ կրօն է, իսկ քրիստոնէութիւնը՝ մեր կրօնը, սխալ է: Միհրներսէսը հրամայեց՝ կամ այս նամակի պատասխանը գրեն և կամ Պարսկաստան գնան թագաւորի մօտ:

Հայոց Յովսէփ կաթողիկոսը, երբ այս նամակն ստացաւ, հրաւիրեց գլխաւոր եպիսկոպոսներին և շատ քահանաների, Արտաշատ քաղաքում ժողով արեց և Միհրներսէս հազարապետի նամակին պատասխան գրեցին: Այս պատասխանի մէջ հայերը հաստատում էին, որ պարսիկները կրօնը սխալ է, քրիստոնէականն է ճշմարիտը: Նամակն այսպիսի խօսքով վերջացրին. «Մեք հաւատին ամենքս էլ հաստատուն ենք»:

ինչ ուղղում ես արա — քո սուրը՝ մեր պարանոցը»:

24. ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ՊԱՐՍ- ԿԱՍՏԱՆ

Երբ այս նամակը կարգացին, Յազկերտը և Պարսից իշխանները խիստ զարմացան, թէ ինչպէս հայերը համարձակ և աներկիւղ իրանց կրօնը պաշտպանում են: Յազկերտը կատաղեց և մոգպետի խորհրդով հայոց նախարարներին իւր մօտ կանչեց: Դրանց թուում էր սպարապետ Վարդան Մամիկոնեանը և Սիւնեաց իշխան Վառակը, որ պարսիկների կողմից Հայաստանի վրայ կռուվարիչ էր նշանակուած: Հայոց նախարարները թէև գիտէին Յազկերտի միտքը, բայց որովհետև իրանց ազգականներից շատերը Պարսկաստանում գերութեան մէջ էին, կարծում էին, թէ իրանց գնալովը կազատեն նրանց, դրա համար էլ վերկացան և գնացին: Բայց գնալուց առաջ Յովսէփ կաթողիկոսի առաջ խաչ ու աւետարանի վրայ երդում կերան, որ իրանց կրօնին հաւատարիմ կմնան:

Առաջ՝ երբ հայոց նախարարները Պարսկաստան էին գնում, թագաւորը նրանց առաջ մարդ

էր ուղարկում և հարցնում էր Հայաստանի որպիսութեան մասին, բայց այս անգամ այս պատիւը Հարին հայ իշխաններին, այլ Յազկերտը բարկացած խօսեց նրանց հետ և ասաց, որ եթէ վաղը իւր հետ արևին երկրպագութիւն չտան, ամենքն էլ խիստ կպատժուեն: Նա ասաց, որ զօրք կուղարկէ Հայաստան և նրանց ընտանիքն ու բոլոր հայերին կոտորել կտայ: Հայ նախարարները պատասխանեցին և ասացին. «Մեր սուրբ հաւատը չենք կարող մոռանալ, ինչ տանջանք էլ կուզես, տո՛ւր: Յազկերտը խիստ բարկացաւ և հրամայեց, որ ամենքին էլ բանտարկեն: Հայ նախարարները շատ փող տուին պարսիկ իշխաններին, որ ազատուեն և իրանց երկիրը դառնան, բայց հնար չեղաւ: Այնուհետև ամենքն էլ յոյսերը միմիայն Աստծու վրայ դրին:

25. ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԵՐԵՍԱՆՑ ՈՒՐԱՆՈՒՄ ԵՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

Յազկերտը հայ նախարարներին բանտարկելուց ետոյ զօրք պատրաստեց, որ հայերին հեռու երկիրներ քշէ, որպէսզի անտէր մնացած ժողովրդին իւր կամքը կատարել տայ: Պարսիկ իշխաններից մէկը, որ ծածուկ քրիստոնեայ էր,

և գիտէր այս բանը, եկաւ բանտարկուած նախարարների մօտ ու յայտնեց թագաւորի միտքը: Նա խորհուրդ տուեց, որ երեսանց նրա հրամանը կատարեն՝ մինչև բանտից կազատուեն, իրանց երկիրը կդառնան, իսկ ետոյ էլի կարող են ազատ կերպով քրիստոնեայ լինել: Նա ասաց՝ որ սրանով միայն կարող էք դուք ազատուել և և ձեր անտէր մնացած ժողովրդին պաշտպանել:

Հայ նախարարները հաւանեցին պարսիկ իշխանի տուած խորհրդին և որոշեցին երեսանց կատարել թագաւորի հրամանը, իսկ երբ Հայաստան դառնան, նորից դիմադրեն Յազկերտին: Վարդան Մամիկոնեանն սկզբում հակառակ էր երեսանց ուրանալուն էլ, բայց վերջը համաձայնուեց:

Թագաւորին յայտնեցին, որ հայ իշխանները պատրաստ են նրա կամքը կատարելու: Յազկերտը չափից դուրս ուրախացաւ, նախարարներին պատիւներ տուեց, մի գունդ զօրք և 700-ից ակելի մոզ և մոզպետներ ուղարկեց Հայաստան, որպէսզի հայերը իրանց տուած խօսքից ետ չկանգնեն և կրակապաշտութիւն սովորեցնեն:

26. ՀԱՅԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՆՑ ԿՐՕՆԸ

Պարսկաստանի հայ նախարարների մօտ քահանաներ ևս կային: Սրանք, երբ իմացան նախարարների ուրացութիւնը, խիստ տրտմեցան, հեռացան նրանցից, իրանցից մինին առաջուց Հայաստան ուղարկեցին, որ այս ուրացութիւնն իմաց տայ ամենին: Հայաստանի եպիսկոպոսներն ու քահանաները, երբ լսեցին նախարարների ուրացութիւնը, խորհուրդ արին և որոշեցին, որ ամեն միջոց գործ դնեն և թոյլ չտան ուրացեալներին և մոգերին Հայաստան մտնելու: Որոշեցից նոյնպէս՝ որ ոչ մի ուրացողի չխնայեն— ոչ ազգականի, ոչ եղբոր, ոչ հօր, ուստի և այս նպատակով՝ թէ՛ մարդիկ և թէ՛ կանայք զէնք առան և պատրաստ սպասում էին:

Հայ նախարարները պարսիկ զօրքի հետ նոյեմբեր ամսին Հայաստան մտան: Մի ամիս չափ հանգստանալուց ետոյ, մի կիւրակէ մոզպետը մոգերի հետ գնաց եկեղեցի և կամենում էր ժամերգութիւնը խանգարել: Առնդ քահանան խաչը ձեռին յարձակուեց մոգերի վրայ և թոյլ չտուեց: Ժողովուրդն էլ փայտերով վրայ ընկաւ և շատերի գլուխը կտորելով՝ դուրս արին եկեղեցուց: Մոզպետը զարհուրեց, իւր աչքով տեսաւ, թէ ինչքան հաստատ են հայերն իրանց

հաւատին, ուստի յոյսը կտրեց այն բանից, թէ հնարաւոր է հայերին կրակապաշտ դարձնել: Ետոյ Վասակ իշխանին իւր մօտ կանչեց, խիստ յանդիմանեց և ասաց. «Եթէ դու ևս չես կամենում մեր կրօնն ընդունել, պարզ ասա ինձ, որպէսզի գրեմ մեծ մոգպետին և Միհրնէրսեհին՝ համոզեն թագաւորին և թոյլ տան ձեզ ազատ կերպով ձեր կրօնը պաշտել»:

Անօրէն Վասակը մի կողմից փառասիրութեան համար, միւս կողմից քանի որ իւր որդիները պատանդ էին պարսից թագաւորի մօտ, եթէ քրիստոնեայ մնար, նրանց կսպանէին, սլրտանց ուրացել էր իւր հաւատը: Նա շատ աշխատեց քաղցր խօսքերով համոզել մոգպետին, որ հանգստանայ: Ինքն էլ Սիւնեաց երկրից շատ զօրք բերել տուեց, որ թագաւորի հրամանն ուժով կարողանան կատարել տալ: Վասակն ամեն կերպ աշխատում էր տարածել կրակապաշտութիւնը — մի քանիսին փող էր տալիս, մի քանիսին փառք և պատիւ էր խոստանում, որ կրակ պաշտեն, իսկ մոգերին էլ նախարարների տներն ուղարկեց, որ քարոզեն կրակապաշտութիւնը:

27. ԺՈՂՈՎ ՎԱՍԱԿԻ ՉԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՎԵՐՋ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նպիսկոպոսները երբ տեսան Վասակի արած չարութիւնները, հայոց բանակի ուրացեալ իշխաններին և քրիստոնէութեան հաւատարիմ մնացողներին իրարից բաժանեցին: Ժողով արին. Վարդան սպարապետին և բոլոր հաւատարիմ իշխաններին ժողովի հրաւիրեցին. խիստ յանդիմանեցին նրանց, որ աչքով տեսնում են Վասակի չարութիւնները և ոչինչ չեն անում: Նրանք աւելացնում էին. «Եթէ Վասակի արածները դուք էլ հաւանում էք, առաջ մեզ սպանէք և ետոյ ինչ ուզում էք, այն արէք, իսկ եթէ ոչ՝ պէտք է պատժել նրան»:

Իշխաններն ամենքն էլ մի սիրտ, մի հոգի դարձան և պատրաստուեցան ուրացեալ Վասակի դէմ գնալ և նրա չարութիւններին վերջ դնել: Այս բանին մէկը միայն չհաւանեց, բայց իսկոյն միւսները վրայ ընկան և տեղն ու տեղը սպանեցին: Այս եղելութիւնը միւսների վրայ մեծ ազդեցութիւն արեց:

28. ՎԱՍԱԿԻ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՉԿԵՐՏԻ ՆՈՐ ՀՐԱՄԱՆԸ

Սիւնեաց Վասակ իշխանը նորից սկսեց Հա-

յաստանը տակն ու վրայ անել—մոռացաւ իւր խոստումը, որ արել էր խաչի և աւետարանի վրայ: Շատ ամուր բերդեր կործանեց. գիւղեր այրեց. նախարարների ընտանիքներ բռնեց և իւր երկրի բերդերի մէջ դրեց. եկեղեցիները քանդեց և քահանաներին բանտարկեց:

Վարդանն այդ ժամանակ Աղուանքումն էր: Վասակի չարութիւններն իսկոյն գրեցին սպարապետին և յայտնեցին, որ շատ նախարարներ միաբանել են Սիւնեաց իշխանի հետ: Այս լուրն առնելուն պէս՝ Վարդանը իւր զօրքով Հայաստան դարձաւ: Վասակը գիշերով փախաւ իւր երկիրը:

Բայց որովհետեւ ձմեռը վրայ էր հասել և Վարդանը պաշար չունէր բոլոր զօրքերը իւր մօտ պահելու, այդ պատճառով նրանց մեծ մասը իրանց տեղերն ուղարկեց՝ խիստ հրաման տալով՝ որ դարնան նորից իւր մօտ ժողովուեն: Իւր սեպական զօրքերից շատ գնտեր Վասակի երկիրն ուղարկեց, որոնք շատ տեղեր քար ու քանդարին և ուրացեալներին այնքան նեղը ձգեցին, որ կերակուր չունէին, սատկած էշի և ձիու միւս էին ուտում:

Որպէսզի պարսից թագաւորի սիրտը շարժեն և ստիպեն նրան մի ձևով իւր մտքից ձեռք վերցնել, գերի բռնուած մի պարսիկ իշխանի ազատութիւն տուին. եղած փաստները և Վասակի

արածները մէկ-մէկ պատմեցին նրան ու Պարսկաստան ուղարկեցին, որ գնայ և Յազկերտին պատմէ այս բոլորը: Յազկերտը երբ այս մարդուց Հայաստանի նեղ վիճակն իմացաւ, այնպէս ցոյց տուեց որպէս թէ ցաւում է: Նեղութեան մէջ եկող քրիստոնեաներին հրամայեց ազատութիւն տալ. պատուիրեց, որ թոյլ տան իրանց կրօնը համարձակ կերպով պաշտել. քահանաներին էլ թոյլ տուեց, որ եկեղեցիների մէջ քրիստոնէական պաշտօն կատարեն: Նամակ գրեց Հայաստան, ասաց որ ամենին էլ ներեն և կատարեալ ազատութիւն տան: Այս բոլոր կարգադրութեան միտքն էր հայերին երեսանց հանդարտացնել, իսկ ծածուկ իւր պատրաստութիւնն էր տեսնում: Բայց երբ տեսաւ, որ հայերն իրա միտքը հասկանում են և չեն խաբւում, այն ժամանակ զէնքով կամեցաւ ստիպել հայերին, որ թողնեն իրանց հաւատը: Սրա համար մեծ զօրք պատրաստել տուեց. Միհրնբերսին էլ նրանց վրայ զօրապետ նշանակեց և մեր երկիրն ուղարկեց: Բայց հայերը, որոնք շատ անգամ էին խաբուել պարսիկներից, այս անգամ չսխալուեցան, նրանք էլ իրանց պատրաստութիւնն էին տեսնում:

29. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄ

Միհրներսեհը զօրքն առած Հայաստան եկաւ: Վասակին իրա մօտ կանչեց և բոլոր գործերը նրան յանձնեց: Վասակն էլ ժողովեց այն նախարարներին, որ իւր մօտն էին, նրանց զօրքը իւր զօրքի հետ միացրեց և Սիւնիքի բնակիչներին ստիպեց կրակապաշտ դառնալ:

Վարդան սպարապետը յոյսն Աստծու վրայ դրեց և պատրաստուեցաւ նրանց գէմ գնալու: Այն նախարարները, որոնք իւր հետ համաձայն էին, 65,000 զօրք հաւաքեցին, զնացին թշնամու դէմ և բանակ ձգեցին Արտազ դաշտում, որտեղ մի ժամանակ Սանդուխտ կոյսը նահատակուել էր: Թշնամու զօրքը երկու անգամ աւելի էր: Այստեղ եկան Յովսէփ կաթողիկոսը և Ղևոնդ երեցը ուրիշ շատ քահանաների հետ, որպէսզի նրանք էլ իրանց կողմից այս հոգևոր պատերազմին մասնակցեն:

Վասակը և պարսից իշխանները, երբ տեսան, որ հայ նախարարները միաբանուել են, վախեցան նրանց զօրութիւնից, սկսեցին նորից սուտ երգումներ անել, որ իրարից բաժանեն, բայց ի զուր—էլ ոչ ոք չհաւատաց նրանց:

Երկու կողմն էլ պատրաստ կանգնած էին իրար դէմ ու դէմ Տղմուտ գետի ափին, 451

թուի Հոգեգալստեան տօնին, նախընթաց գիշերը Ս. Ղևոնդը պատարագ արեց. Ս. Յովսէփի հրամանով ճառ խօսեց և ոգևորեց ամենին: Զօրքը հաղորդուեց և պատերազմի պատրաստուեց: Ս. Ղևոնդից ետոյ Վարդան սպարապետը խօսեց և ոգևորեց, որ քաջութեամբ կռուեն:

Վարդանը հայոց զօրքը չորս մասի բաժանեց, ամեն մի մասը մի իշխանի յանձնեց և յարձակուեց իրանից չորս անգամ աւելի պարսիկ զօրքի վրայ:

Վարդանը երկար ժամանակ քաջութեամբ պատերազմեց, բայց վերջն ընկաւ: Թէև Վարդանը մեռաւ, բայց պատերազմը մինչև երեկոյ շարունակուեց—յաղթութիւնն անորոշ մնաց: Այս պատերազմի մէջ հայերի կողմից ընկան 1,036, իսկ պարսիկներից՝ 2,545 հոգի

Այսպէս մեր պապերը մեռան և թոյլ չտուին, որ պարսիկները ձեռք տան մեր եկեղեցուն և հաւատին: Մեր եկեղեցին էլ նրանց չմոռացաւ և տօն նշանակեց, որ ամեն տարի Բարեկենդանի երեքշաբթի և հինգշաբթի օրերը տօնուի: Երեքշաբթուայ տօնը նշանակուած է այն հոգևորականների համար, որոնք Ս. Ղևոնդի հետն են նահատակուել և տօնն էլ կոչւում է Ղևոն,

դեանց նահատակութիւն: Իսկ Վարդանի հետ
ընկնող վկաների տօնը կատարում ենք հինգ-
շաբթի որ կոչւում է Վարդանանց նահա-
տակութիւն,

Շարական Ս. Ղեռնդեանց

Որք եկեալ հասեալ լինէին սևագունդ զօրն
պարսից, զի յափշտակեցեն զառաջնորդան
Հայաստանեայց զՍուրբ Ղեռնդեանս:

Պարսից սևագունդ զօրքը գալիս, հասնում էր մեր
երկիրը, որպէսզի հայաստանցիներին առաջնորդ Ս.
Ղեռնդեաններին յափշտակէ (տանէ):

Որք չուեալ գնացեալ լինէին ի պալատն
անօրէն թագաւորին, զի վկայեցեն ճշմա-
րիտ սուրբ Երրորդութեան սուրբ Ղեռն-
դեանքն:

Սուրբ Ղեռնդեանները վեր էին կացել, գնացել
էին անօրէն թագաւորի պալատը, որպէսզի վկայեն
սուրբ Երրորդութեան ճշմարտութիւնը:

Լուսաւորիչն ամենեցուն Ղեռնդիէ սուրբ
վարդապետն խոհական մեծ խորհրդով
խրատեալ լցոյց զաշակերտեալսն. ծաւալեալ
զլոյս գիտութեան յոգիս արանց կատարե-

լոց կամաւոր յօժարութեամբ կատարեցան
սիրով փրկչին:

Ամենին լուսաւորող Ս. վարդապետ Ղեռնդը խե-
լացի և մեծ մտքերով խրատելով (աշակերտներին),
տարածեց գիտութեան լոյսը հասակաւոր՝ կատարեալ
մարդոց սրտերում, որոնք ի սէր Յիսուսի՝ կամաւոր
կերպով նահատակուեցան:

30. Խ Ա Զ Վ Ե Ր Ա Յ

Պարսիկների խոսքով թագաւորը Քրիստոսի
ծննդից 614 տարի ետոյ Երուսաղէմ քաղաքն ա-
ռաւ և Յիսուսի սուրբ խաչը գերի տարաւ: Բոլոր
քրիստոնեաները խիստ տխուր էին այս բանի հա-
մար: Բայց խաչի գերութիւնը երկար չքաշեց, ո-
րովհետև 15 տարուց ետոյ յոյների կայսր Հերակլը
պատերազմեց խոսքովի հետ, յաղթեց նրան և
սուրբ խաչը գերութիւնից ազատեց: Սրանից
ետոյ խաչափայտը մաս-մաս արին և բաժանե-
ցին բոլոր քրիստոնեաներին,

Երբ խաչը գերութիւնից ազատեցին, առան-
ձին տօն նշանակեցին, որ կատարուում է սեպ-
տեմբեր ամսուայ մէջ: Այդ օրը թափոր են ա-
նում եկեղեցւոյ շուրջը, խաչը բարձրացնում

վերացնում են և օրհնում աշխարհիս չորս կողմերը: Որովհետև օրհնելիս խաչը բարձրացնում, վերացնում են, դրա համար էլ տօնը կոչւում է Խաչվերաց:

Շ ա ր ա կ ա ն Ս. Խ ա չ ի

Ապաւինեցաք ի խաչքո, արարիչ յաւիտենից,
Որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ
թշնամոյն.

Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զան-
ձինս մեր:

Յաւիտենից Արարիչ, յոյսներս քո խաչի վրայ ենք դրել, այն խաչի, որ մեզ յաղթող պահապան նշանակեցիր թշնամու դէմ: Խնդրում ենք, ով Փրկիչ, սրանով պահպանիր մեզ:

31. Ե Կ Ե Ղ Ե Յ Ո Ի Ձ Ե Ի Ը

Հին ժամանակուայ քրիստոնեաները մեզ նման փառաւոր շէնքերով եկեղեցիներ չունէին: Նրանք հաւաքւում էին մի հասարակ տան մէջ՝ շատ անգամ գետնափոր տներում և միասին աղօթում էին, իսկ աղօթքից ետոյ հացը կտրում էին և բաժանում, ետոյ հաղորդւում էին: Տան

վերևի մասը փոքր ինչ բարձր էր. այստեղից էր քարոզում հովիւը—քահանան:

Աւելի ուշ ժամանակներում աղօթատեղու՝ եկեղեցու միջին մասին նաւի ձև տուին, որ նշանակում էր, թէ եկեղեցին մի նաւ է, որի մէջ մտնողները՝ քրիստոնեաները նստւում են դէպի նաւահանգիստ՝ երկնքի արքայութիւնը: Ոմանք էլ կլոր ձև էին տալիս: Նաւի մէջ մտնելու իրաւունք ունէին միայն նրանք, որոնք մկրտուած էին, իսկ չմկրտուածները դաւթում՝ նաւի ետևում էին կանգնում: Արևմտեան կողմում սիւներ կային՝ վարագոյրով միացրած, ահա այնտեղ էին կանգնում, իսկ երբ մկրաւում էին, իրաւունքէին ստանում նաւի մէջ մտնելու:

Փոքր ինչ ետոյ նաւակի աջ ու ձախ կողմերում երկու փոքրիկ նաւեր ևս որոշեցին և այսպիսով եկեղեցին խաչի ձև ստացաւ, որ մինչև մեր օրերը պահպանւում է: Երբ քրիստոնէութիւնն ազատ կրօն դարձաւ, սկսեցին ամեն տեղ գեղեցիկ եկեղեցիներ շինել խաչաձև յատակածրով, որ ծագել է երեք նաւերի միաւորութիւնից: Կլոր ձևն էլ մեր ներկայ գմբէթն է, որ եկեղեցու մէջ տեղումն է: Եկեղեցու սիւները միանում են կամարներով, որ երկինքն է յիշեցնում մեզ: Եկեղեցու շինուածքը բաժանւում է երեք մասի—գաւիթ, ատեան և բեմ:

32. ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Գաւիթ—Այժմեան եկեղեցիները գաւիթ չունեն։ սա հին եկեղեցու այն մասն է, ուր կանգնում էին չմկրտուածները (երեխաները)։

Ատեան—Այն տեղն է, ուր կանգնում են հոգևորականները և ժողովուրդը։ Եկեղեցու հին սովորութեան համաձայն՝ առաջ կանգնում են հոգևորականները, որ կոչւում է դաս, ետոյ տղամարդիկ, իսկ ամենից վերջը՝ կանայք։ Սեղանի աջ կողմի պատի մէջ աւագանն է, իսկ նրա ղիմաց՝ ձախ կողմում՝ բուրվառան օցը։

Բեմ—Ատենից եօթն աստիճաններով բարձր է։ Բեմի վրայ գտնւում է սեղանը, ուր պատարագ է մատուցանւում։ Բեմից է քարոզում եպիսկոպոսը։ Այստեղ իրաւունք ունին բարձրանալ միայն հոգևորականները կամ որոց իրաւունք է տրուած։ Սեղանը շինուած է բեմի վրայ, հարկաւոր ժամանակ քաշում են վարագոյրը։ Բեմի մէջ տեղում հաստատուած է օծուած խաչաձև վէմը։ Առանց այս քարին չի կարելի պատարագ մատուցանել։

Բեմի վրայ վէմ քարի ուղղութեամբ շինւած է խաչակալը, որի աջ և ձախ կողմերում դռներ կան։ Այս դռների վրայ պէտք է նկարել Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների պատ-

կերները, որոնք հայոց եկեղեցու գլխաւոր սիւներն են։

Երկու դռների մէջ տեղում վէմ քարի վրայ երեք աստիճան է շինուած, որոց վրայ դրած են ամենից բարձր՝ խաչ, ետոյ Քրիստոսի պատկերը (դաստառակ), իսկ վերջը՝ աւետարան։ Աստիճանների ետևում Աստուածածնի պատկերն է՝ Յիսուսին գրկած։ Այս երեք աստիճանների վրայ դրած է լինում միւռնամանը և մասնատուփը։

Սեղանի աջ դրան կողմում՝ ներսից ընծայարանն է, որտեղ սկիհն են պահում։

Եկեղեցու հիմքի զանազան կողմերում դնում են առաքեալների, աւետարանիչների և Ս. Գրիգոր Լուսաւորչի անուններով օծած քարեր— ընդամենը 16 հատ և ապա սրանց վրայ հիմն են ձգում, որովհետև քրիստոնէութիւնը սրանք տաւածեցին ամեն տեղ—հիմնեցին զանազան տեղերում եկեղեցիներ և նրա հիմքը եղան։ Այդ քարերն անտաշ պիտի լինեն, որ նշանակում է, թէ առաքեալներն ուսում չունէին և Սուրբ Հոգւոյ շնորհով էին քարոզում։ Քարերը առաջ լուսնում են, որ նշանակում է մկրտել և ապա օծում են, որ նշանակում դրոշմ։ Բեմի վրայ է վէմ քարը—սա Քրիստոսի օրինակն է, որ իւր հիմնած եկեղեցու սուրբ սեղանի վրայ բազմած է։

Բեմի աջ և ձախ կողմերում երկու խորաններ կան—աջակողմեանը զգեստաւորուելու համար է, իսկ ձախակողմեանը՝ զգեստները պահելու համար:

Շինութիւնն աւարտելուց ետոյ՝ եկեղեցին օծում են:

33. ՍՐԲԱԶԱՆ ԱՆՕԹՆԵՐ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Սկիհ—Այն անօթն է, որի մէջ պատարագիչը գիւնի է ածում. հաց՝ նշխարն դնում, որ աղօթելով դառնում է Քրիստոսի մարմինն ու արիւնը: Սկիհի բերանին դնում են մի խուփ, որի անունն է մաղղմա: Սկիհը շինում են կամ ոսկուց և կամ արծաթից:

Մասնատուփ—Փոքրիկ տուփ է՝ ոսկուց կամ արծաթից շինած, որի մէջ դնում են մասը՝ կամ հաղորդը և երբ մինը յանկարծ հիւանդանում է կամ եկեղեցի չի կարողանում գնալ, տուն ևն տանում և հաղորդում:

Միւռոնաման—Նոյնպէս ոսկուց կամ արծաթից շինած մի աման է, ըստ մեծիմասին աղաւնու նման. մէջն ածում են սուրբ միւռոնը, մկրտում երեխաներին կամ պատկերներ օծում:

Քշոց—Քշոցը զարդ է, կթը փայտից է, իսկ վերևի կլոր մասնի վրայ վեց թևեան Սե-

րովբէ և Քերովբէ հրեշտակապետների պատկերներ կան նկարած, որ նշանակում է, թէ նրանք ևս սպասաւորում են պատարագի ժամանակ:

Բուրվառ—Մէջը կրակ են ածում և վրան խուսկ ծխում, որ նշանակում է, թէ ինչպէս այս խնկի ծուխը դէպի վեր է գնում, այսպէս էլ մեր աղօթքը դէպի Աստուած ենք ուղղում:

Խաչվառ—Սա եկեղեցական դրօշակ է—մի պատկեր՝ կտաւի վրայ, որի մի կողմում խաչելութիւնն է, իսկ միւս կողմում՝ Աստուածածինը Յիսուսին գրկած: Պատկերը կախ է տուած մի ձողից, որի գլխին տնկած է խաչ:

34. Զ Գ Ե Ս Տ

1. ԴՊԻՐՆԵՐԻ ԿԱՄ ՏԻՐԱՑՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շապիկ—Գլխից մինչև ոտները՝ երկայն, հասարակ՝ մաքուր շապիկ, որ նշանակում է, թէ ինչպէս արտաքուստ մաքուր է շրերը, այսպէս էլ ներքուստ՝ սիրտը սրա նման մաքուր պիտի լինի:

2. ՍԱՐԿԱԻԱԳԻ ՀԱՄԱՐ

Ուրար—Երկայն, լայն ժապաւէնի նման,

զառ կտոր, որ ձգում է ձախ թևի վրայ: Սա նշանակում է, թէ սարկաւազն աւետարանի լուծը դեռ ամբողջապէս չէ կրում, այլ՝ մասամբ, այն է ձախ ուսով: Սարկաւազը հագնում է և շապիկ:

3. ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Քահանան երբ զգեստաւորւում և պատարագ է մատուցանում, ներկայացնում է Քրիստի կեանքը: Պատարագի զգեստները նշանակում են Քրիստոսի կրած չարչարանքները: Քահանայի զգեստները սրանք են—

Շապիկ—Երկայն, վզից մինչև ոտները, գոյնը սպիտակ: Սա նշանակում է, 1, այն սպիտակ հանդերձը, որ Հերովդէսը հագցրեց Քրիստոսին ծաղրելու համար՝ 2, քահանային վայել է պատարագի ժամանակ սպիտակ հագնել, որովհետև քահանայի գործը հրեշտակի գործ է: Աւետարանիչը հրեշտակի շորերը սպիտակ է նկարագրում:

Գօտի—Նշանակում է այն խարազանը, որով Քրիստոսին խփում էին՝ սեանը կապած:

Բազպան—Այն կապանքն է, որով հրէաները կապեցին Յիսուսի ձեռները Գեթսեմանում:

Փոքուրար—Աստծու պատուիրանի լուծն է, որը քաղցր է և թեթև: Այս լուծը սարկաւազը

ձախ ուսով է միայն տանում, իսկ քահանան՝ և՛ աջ և՛ ձախ ուսով—ամբողջապէս:

Շուրջառ կամ նափորտի—Նշանակում է կարմիր վերարկուն, որով ծածկեցին Քրիստոսին:

Սաղաւարտ—Նշանակում է այն փշեայ պսակը, որ Քրիստոսի գլխին դրին:

Վաղաս—Ուսերի վրայ է կրում քահանան, վրան նկարած է 12 առաքեալների պատկերը՝ մէջ տեղը Քրիստոսը:

4. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՐ

Եպիսկոպոսն ունի այն բոլոր զգեստներն՝ ինչ որ քահանան:

Բացի դրանից ունի խոյր կամ թագ, որ միևնոյն նշանակութիւնն ունի, ինչ որ քահանայի սաղաւարտը:

Եմիփորոն—Հինգ խաչով զարդարուած լայն ուրար է, կրում են շուրջառի վրայից, սա է եպիսկոպոսական յատուկ զգեստը:

Արտախուրակներ—Երկու հատ, կէս կանգուն երկարութեամբ կապեր են, կախում են վակասի ետևից:

5. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՏՈՍԻ ԿԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ

Բացի քահանայի և եպիսկոպոսի զգեստնե-

րից, ունի նաև կոնքետ, որը քառակուսի ձև ունի
և կախուած է լինում գօտքից՝ ձախ կողմից և
հասնում է մինչև ծունկը: Կոնքետը նշանակում է,
1, ափն դեռ չափը, որով Յիսուս աշակերտների
ոտները սրբեց, 2, հովուական մաղախ: Կոն-
քետ կրելու իրաւունք կաթողիկոսն ունի:

35. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Խունկ մատուցանեմք առաջի քո տէր
յօրինակ ըստ հնումն Զաքարիա: Ընկալ առ
ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս
զպատարագն Աբէլի, Նոյի և զԱբրահամու:

Խունկ ենք մատուցանում (աղօթում) քո առաջը հին
եկեղեցւոյ Զաքարիայի օրինակի նման: Ընդունիր մեր
կողմից խնկանուէր մաղթանքը՝ Աբէլի Նոյի և Աբրահա-
մի պատարագի պէս:

Ողջոյն տուր միմեանց ի համբոյր սրը-
բութեան և որ ոչ էք կարող հաղորդել աս-
տուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և
աղօթեցէք:

Ողջոյն (բարև) տուէք մէկ մէկու սրբութեան համ-
բոյրով, իսկ որոնք չեն կարող հաղորդուել աստուածա-
յին խորհրդից, թող դրան առաջը դուրս գան և աղօթեն:

7/XI 1922

ВЕРНА, МАСНИНА

У. 8. АУЛЫЗУНІ АՆՎԱՆ

րից, ունի նաև կոնց և ուր ընտանիքի մեջ
և կախած է լինում զօգրքը՝ նախ կողմից և
համարում է մինչև ծանկր կանգնող նշանակում է,
2, այն զեն իսկը, որով նրանք աշակերտների
սաները արից, 2, նմանական մագախ: Կմ-
քնա կրկու, իրար հար կաթողիկոսն ունի:

35. ԳԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Ունի մատուցանիք առաջի քա աէր
յօրինակ քառ հասնե Զարարիա: Ընկալ ա
ի մէջ զմեկանուէր մագիթանս, որպէս
զգաւարացն Արէլի, Նոյի և զԱրարիա:

Ունի նաև մատուցանում (աղօթում) քա առաջին
եկեղեցու Զարարիայի օրնակի նման Ընդունիր մեր
կողմից ինկանուէր մագիթանը՝ Արէլի Նոյի և Արարիա-
մի զգաւարացի զէս:

Ողջոյն տուր միմեանց ի համարայր ար-
քայիեան և որ ոչ էր կարող հաղորդիլ ա-
տուածային խորհրդոյս, առ գրուես եղէր և
աղօթեցք:

Ունի (արի) առէր մէկ մէկ, որքան համ-
արար լին կարող հաղորդանք առաւումա-
նային, որպէս առաջին զորք զան և աղօթեն:

ՀՀ Ազգային գրադարան



NL0145961

ԲՄ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԻ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՕՆԻ
ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐԵՐԸ

I. ՍԻՍՈՒՑՁՆՑ ՀԱՄԱՐ

ԳԻՆՆ Է 2672.

Ստորին շրջան

1. Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	»	80	25
2. Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	»	85	25
3. Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	1	»	35
4. Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	1	5	35

Միջին շրջան

5. Ուսողցումն քրիստոն. կրօնի հատ. Գ.	1	50	35
6. Ուսողցումն քրիստոն. կրօնի հատ. Ե.	»	50	35
7. Տաճն պատուիրան	»	50	35

II. ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՄԱՐ

8. Դաստակար կրօնի (պատկ.) ա. տարի	»	27	25
9. Դաստակար կրօնի (պատկ.) բ. տարի	»	25	25
10. Դաստակար կրօնի . . . գ. տարի	»	30	20
11. Սրբազան պատմ. հին-ուխտի (պատկ.)	»	50	25
12. Սրբազան պատմութիւն նոր-ուխտի	»	40	20
13. Գործք առաքելոց	»	40	20

14. Բարոյախօսութիւն	»	50	25
15. Մի քանի խօսք հայ հրօնասոյցներին	»	10	25

Ցանկացողները կարող են դիմել ինձ

Тифлисъ---Вербутовск. ул. № 20. Прот. С. Саакянцъ,
և կովկասի բոլոր գլխավոր գրավաճառներին.